ՉՈՐՐՈՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՏ. ՉՈՐՅԱՆԻ ՊԱՏՄԱՎԵՊԵՐԸ

Վ. Ս. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Չորյան պատմավիպասանի առջև կանգնած դժվար խնդիրներից է եղել IV դարում Արշակունյան Հայաստանում կենտրոնացած հզոր պետականության համար ծավալված պայքարի ճշմարտացի արտացոլումը։ Անհրաժեշտ էր փաստերի քննական վերագնահատություն, ենթադրվում էր հիմնավոր ստեղծագործական բանավեճ հնօրյա պատմագրության դրույթների հետ։ Հասարակական այդ մեծ ու բարդ հարցի հետ կապված իրադրությունների արտացոլումը վիպասանը դարձրել է «Հայոց բերդի» կենտրոնը։

«Հայոց բերդի»՝ «սեփական բերդը» կառուցելու կենտրոնական գաղափարի ուրվագիծը նշմարվում է դեռևս Չորյանի անդրանիկ պատմավեպի գլխավոր հերոս Պապ թագավորի՝ Մուշեղ սպարապետին ուղղած հետևյալ խոսքերում. «Ես թշնամություն չեմ քարոզում, սպարապետ. ես կամենում եմ՝ զորացնենք մեր բազուկը, որպեսզի մեր հարևանները հարգեն մեզ... Ես ուզում եմ, որ միշտ օգնություն ակնկալող չլինենք և ընդօրինակող ստրուկ... Այլապես ի՞նչ ենք մենք. նախարարների մի մասի աչքը պարսից կողմն է, մյուս աչքը՝ Բյուզանդիայի, և մի բան պատահելիս վազում-ապավինում են սորան կամ նորան և ամրացնում նոցա պարիսպը։ Այժմ էլ, շատերը մեր տունը թողած, կամենում են շինել հոռոմների տունը, ամրացնել նոցա պարիսպները։ Ոչ, սպարապետ, սեմ պեամ է շինեմ մեր բերդը. *պետք է ամրացնենք մեր պարիսպները և ապավինենք ինքներս մեզ... Այդ չեն գիտակցում մեր հոգևոր հայրերը... Բայց դու, որ զենքը ձեռքիդ միացնում ես մեր երկրի անջատված մասերը՝ պատժելով հայրենադավ իշխաններին,* օգնիր սեր սեփական բերդը շինելու, որ մենք լինենք մեր նեցուկը... *(192)։*

Երկրի անկախության գլխավոր հենարանը խորհրդանշող «սեփական բերդ», «սեփական նեցուկ» ստեղծելու այս գաղափարն է, ահա, որ Չորյանը դրել է «Հայոց բերդ» պատմավեպի հիմքում, դրա շուրջը և դառնում են վիպական բոլոր բախումները իրենց բարդ, դրամատիկական հանգուցալուծումներով։

Ուշագրավ է հենց վեպի մուտքը, որով ընթերցողը միանգամից ընկնում է դարաշրջանի ճակատագրական անցուդարձերի մթնոլորտը։

Կամսարականի ամրոցն են հավաքվել երկրի մի խումբ նախարարներ՝ Վահե Վահևունին, Վարձա Ապահունին, Բասենի իշխան Մանեճը, Համունի եղբայրները, Պապակ Պալունին և ուրիշներ։ Հուզված ու զայրացած են նրանք Արշակ թագավորի վերջին հրովարտակի առիթով. նախարարների վեճերից պարզվում է բուն իրողությունը — թագավորը մտադիր է շուտափույթ ավարտել նոր բերդաքաղաքի շինությունը և ահա այդ նպատակով, զանազան արտոնություններ խոստանալով, Արշակավան է հրավիրում նախարարական կալվածքների շինականներին. այնքան գայթակղիչ են Արշակի խոստումները, որ չնայած նա-

խարարների հարուցած արգելքներին, այլևս անհնարին է կասեցնել մարդկանց-մասսայական հոսքը դեպի Արշակավան։

Մեծ վարպետությամբ կերտված նախարարական գաղտնաժողովի այդ պատկերում լավագույնս նախապատրաստվում է վիպական հետագա դեպքերի զարգացումը, նախանշվում դրամատիկ հանգամանքների ծավալման ընթացքը։ Ըստ էության, հենց այստեղ, վեպի առաջին էջերում հեղինակն սկսում է իր ստեղծագործական բանավեճը մեր հին պատմիչների կողմնակալ դիրքորոշումների հետ և փաստորեն պարզում է իր ընդհանուր հայեցակետը թագավորի ու նախարարների յուրօրինակ փոխհարաբերությունների բուն պատճառների մասին։

Նախարարների բորբոքված վեճերից պարզ են դառնում տարիների ընթացքում կուտակված դժգոհության իրական պատճառները, առաջին հերթին այն պարագան, որ թագավորն իր ընթացքով առ ոչինչ է համարում նրանց ավանդական իրավունքները. շոշափում նախարարական ինքնագլխության հիմքը կազմող արտոնությունները։ Դժգոհ իշխանները միաբերան հաստատում են, որ «թագավորն անտեսում է» իրենց և «խախտում ավանդական օրենքները սուրբ» (26)[1]։ Ներսեհ Կամսարականը զայրացած է այն պատճառով, որ «Արշակ թագավորը պահանջել է իրեն հանձնել Արտագերս ու Կապույտ բերդերը, բայց ինքը չի կատարել արքայի հրամանը. «չհանձնեցի,— ասում է նա,— վասնզի չէի կարող մերկանալ իմ զենքերից... Չէի կարող զրկել ինձ ինքզինքս պաշտպանելու միջոցներից» (23)։

Հայոց իշխանների մեջ ամենուրեք խոսում է նախարարական վիրավորված ինքնասիրությունը և ինքնագլխությունից զրկվելու վտանգը։

Իրավիճակն ավելի ընդգծված ներկայացնելու նպատակով հեղինակը ցույց է տվել նաև հակառակ միտումի առկայությունը. նա իշխանաժողովի մասնակիցների թվում հանդես է բերել Անդեղյա տան երիտասարդ իշխանին, որն իր անսքող ու անմիջական դատողություններով հակառակ կարծիք է արտահայտում իրերի դրության մասին։

«Ես, տեր Կամսարական, իշխանաց ժողովում լինում եմ առաջին անգամ,—ասում է նա,—սակայն թե՛ այստեղ, թե՛ դուրսը, լսելով արքայի մտադրությանց մասին, խորհում՝եմ, թե առավել բարվոք չէ՞ր լինի թագավորի դեմ միաբանելու փոխարեն միաբաննենք թագավորի հետ, և այդպես կլիննենք առավել ապահով, քանզի միաբանելով նորան՝ հնար կտանք արքային մեծ բանակ պահելու և թշնամիներին դիմադրավելու...» (31)։ Բանավիճելով Անդեղյա իշխանիկի հետ, Ներսեհ Կամսարականը աշխատում է նրան համոզել, որ «թագավորը կամենում է սեփականել միայն մեր հողերը, մեր բերդերը, մեր մարգերը, իսկ մեր կարիքը նա չի զգում։ Նա խորհում է, իշխանիկ, թե որքան քիչ նախարար՝ այնքան լավ. բյուրապատիկ լավ, վասնզի այդպիսով դյուրին կլինի իշխել և հրամայել...» (31—32)։

Իշխանաժողովի մասնակիցները հավատացնում են միմյանց, թե «Արշակը ոչ միայն ջանում է տկարացնել» իրենց, «այլև՝ կործանել իսպառ», ուստի և որոշում են «զինու զորությամբ» պաշտպանել իրենց ավատական իրավունքները։

---

[1] Քաղվածքները բերում ենք Ստ. Զորյանի երկերի ժողովածուի տասհատորյակի VI հատորից, Երևան, 1962։

Հեղինակը համոզիչ պատկերներով կարողացել է բացահայտել պատմական այն ճշմարտությունը, որ Արշակունի թագավորից դժգոհ նախարարությունների այս ընթացքը ամենևին էլ չի բխում նրանց «տիրադավ» բնավորությունից, այլ պայմանավորված է նախարարների առկա իրավիճակով։ Պատմական փաստերը հաստատում են, որ իրենց ներքին կառուցվածքով ու իրավաքաղաքական վիճակով ինքնուրույն հայ ֆեոդալական իշխանությունները, ղեկավարվելով իրենց ժառանգական արտոնություններն ու ինքնիշխան դիրքը պահպանելու ձգտումով, այդ պատմաշրջանում ոչ միայն շահագրգռված չեն եղել թագավորական կենտրոնացած իշխանության հզորացումով, այլև շատ հաճախ նույնիսկ օտարի գերիշխանությունը, իրենցից հեռու նստած այլազգի թագավորից վասալական կախումը գերադասել են Արշակունիների գահին ենթարկվելուց։ Սկզբնաղբյուրների վկայությամբ, Արշակի գահակալության շրջանը շատ հարուստ էր դրամատիկական անցքերով՝ ինչպես հասարակական-քաղաքական կյանքի, այնպես էլ պատմական հերոսների անձնական կյանքի առումով։ Վիպասանն ընտրել է պատմականորեն տիպական մի այնպիսի եղելություն, որի մեջ առավել որոշակիությամբ են արտահայտվել դարաշրջանի էական առանձնահատկությունները, նա կանգ է առել Արշակավանի կառուցման ու կործանման պատմության և Արշակի կյանքի մի քանի փաստերի վրա։

Զորյանը Արշակավանի պատմությունը չի դիտել իբրև զուտ պատմական փաստ, այլ իբրև ընդհանրացման կոնկրետ մի պատկեր, որի մեջ լավագույնս արտացոլվել են դարի ոգու բնորոշ գծերը, խաչավորվել ժամանակի տիպական հակասությունները, դրսևորվել պատմական զարգացման միտումները։

Պատմավիպասանի կարևոր նվաճումը պետք է համարել այն, որ նոր հայեցակետով մոտենալով հայտնի փաստերի գնահատությանը, նա կարողացել է ցույց տալ, որ այդտեղ իրականում բախվել են ոչ թե ներհակ կողմերի մանր կրքերն ու «անձնական ճղճիմ բաղձանքները», այլ դարաշրջանի հասարակական կյանքի իրարամերժ միտումները. մի կողմում ինքնիշխան նախարարներն իրենց կենտրոնախույս ձգտումներով, իսկ մյուսում՝ Արշակն իր որդեգրած ազգային կողմնորոշումով, կենտրոնացած պետականության հզորացման, երկրի քաղաքական անկախության ապահովման սևեռուն գաղափարներով։ Պատմական անձնավորությունների որոշակի ընթացքի պատճառաբանության մեջ վիպասանն, իհարկե, պատշաճ տեղ է հատկացրել նաև անձնական-հոգեբանական հանգամանքներին, միաժամանակ ցույց տալով, որ դրանք չեն որոշում պատմական խոշոր դեպքերի ընթացքը, որ վճռական դերը պատկանում է կյանքի առարկայական պայմաններին, ավատական հասարակության յուրահատկություններին։

Ըստ հեղինակի մեկնաբանության, միանգամայն պարզ է ու որոշակի Արշակի նպատակը՝ պարսկա-բյուզանդական սրված փոխհարաբերությունների և արտաքին մշտական հարձակումների վտանգի բարդ պայմաններում միավորել երկրի ցաք ու ցրիվ իշխանական ուժերը, նրանց ենթարկել գահի միահեծանությանը, որով հնարավոր կլինի իրական երաշխիքներ ստեղծել ոչ միայն Արշակունյաց երերվող գահը պահպանելու, այլև երկրի քաղաքական անկախությունն ապահովելու համար։ Զորյանը գեղարվեստորեն համոզում է, որ այստեղ թագավորական իշխանության շահերը յուրօրինակ կերպով համընկնում էին Հայոց աշխարհի քաղաքական ճակատագրի կենսական խնդիրներին։

Արշակը քաջ գիտակցում է իր հետապնդած նպատակը գլուխ բերելու ողջ դժվարությունները։ Եվ ահա հեռատես թագավորը հղանում է ամուր ու հուսատու սեփական հենարան ստեղծելու միտքը։ Այդ նպատակով նա Կողովիտ գավառում, պարսից սահմանի մոտ, մեծ ճանապարհների հատման կետում ըսկըսում է ամուր բերդաքաղաքի (կամ, ինչպես թագավորն է անվանում՝ Ավանի) կառուցումը, որը Արշակի նպատակադրումով «պիտի դառնա մի ամրակուռ բերդ ոչ միայն օտար թշնամյաց դեմ, այլև մեր չարամիտ նախարարաց, որ ցայգ ու ցերեկ խորհում են միայն իրենց որկորի մասին և չեն կամենում զորավիգ լինել երկրին հայրենի» (220)։ Թեև երկրի շատ վայրերից, «հատկապես արքունի շեներից» բավական թվով գործավորներ են հավաքվել շինարարության վրա, բայց այն «կատարվում է դանդաղ, քանզի սակավ էին մարդիկ քաղաքի բաղմատեսակ աշխատանքները գլուխ բերելու համար»։ Եվ ահա թագավորը մրսածում է «դիմել նախարարներին և խնդրել նոր գործավորներ տան և առհասարակ օգնեն ավանի շինարարության»։ Նախարարներն առերես խոստանում են «անել կարելին», բայց իրենց խոստումը չեն կատարում։ Այդ պարագան շատ է անհանգստացնում Արշակին և նա, իբրև ժամանակավոր միջոց, միտք է հղանում, որ «նախարարաց պատկանող բերդերը» լինեն թագավորի տրամադրության տակ, որպեսզի «ի դեպս պատերազմի» ինքը ի վիճակի լինի պաշտպանել երկիրը հայրենի» (99)։ Շուտով, սակայն, հայտնի է դառնում, որ բերդատեր նախարարները մտադիր չեն կատարելու Արշակի ցանկություն-պահանջը ո՛չ կամովին, ո՛չ ոսկով և ո՛չ էլ կալվածքների հետ փոխանակելով։ Արշակը այն հաստատուն հետևությանն է հանգում, որ նախարարական ուժերի միավորմանը չի կարելի հասնել խաղաղ ճանապարհով. դրա միակ միջոցը ուժին ապավինելն է։ «Բայց ես կստեղծեմ իմ բերդը,— մի առիթով ասում է նա Անդոկին,— որ լինի ամենքի բերդը և կլինի ավելի հզոր քան նախարարաց բերդերը և զորանով ես կմիաբանեմ նոցա. և այդ միաբանությունը կդառնա հայոց բերդ՝ անխորտակ բերդ... թշնամին անզոր կլինի կործանել նորան։ Այո՛, իշխան, տեսանելի բերդից ավելի կստեղծենք մեր ներքին բերդը...» (242)։

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մի կարևոր հանգամանքի վրա ևս։

Հեղինակն Արշակի քաղաքական ընթացքը բնութագրելիս իրավացիորեն հերքում է պատմագրության մեջ բավական լայն տարածում գտած կարծիքը Արշակի բյուզանդական կողմնորոշման մասին, փաստերի նոր ու համոզիչ մեկնաբանությամբ հաստատելով նրա ազգային կողմնորոշումը՝ իբրև գործունեության բնորոշ կողմ։ Նա իր դժվարին պայքարի ընթացքում առաջնորդվում է այն գաղափարով, որ երկրի անկախության պաշտպանության հաստատուն ճանապարհը միայն ու միայն սեփական ուժերին ապավինելն է։ Երկրի քաղաքական շահերի տեսակետից նա կործանարար է համարում հզոր հարևանների հովանավորությունը։ Բնորոշ է, որ երբ երկրի մեծամեծներից ոմանք (Անդոկ, Ներսես կաթողիկոս և այլն) հայոց աշխարհի ապահովության տեսակետից օգտակար են դիտում Բյուզանդիայի հովանավորությունը, որը, նրանց կարծիքով, կլինի «նեցուկ և զորավիգ վտանգի ժամին», Արշակը մերժում է դա և վճռաբար պնդում, որ «տևական ապահովությունը օտարի օգնությամբ չի լինում», որ «մեր աշխարհի ապահովության հոգսը» պահանջում է, որ «մենք ինքներս կռենք մեր ապահովությունը՝ մեր բերդերով, մեր զինու զորությամբ և ոչ օտարին ապավինելով։ Ապավեն փնտրում են անկարներն ու հիվանդները, բայց ոչ քաջառողջ

սարդիկ» (241)։ Եվ հենց այս գաղափարն էլ իր գեղարվեստական համոզիչ կերպավորումն է ստանում վիպական գործողությունների մեջ։

Արշակի քաղաքական կողմնորոշման հարցին դեռևս իր ժամանակ ճիշտ մոտեցում է ունեցել Ռաֆֆին։ Հիշենք Արշակի խոսքերը՝ Անհուշ բերդը այցելության եկած ու իրեն փախուստի առաջարկ անող Դրաստամատին. «Երբեք չեմ յանկանա փախստականի անուն ժառանգել, Դրաստամատ։ Ո՞ւր գնամ։ Հռոմեացո՞ց մոտ։ Պարսկի բանտը ինձ համար ավելի տանելի է քան թե նրանց կեղծավորությամբ լի պալատները...» (Ռաֆֆի, հ. 7, էջ 252)։

Այսպիսով՝ օտարի հովանավորությունից անկախ, ազատ ու ինքնուրույն հզոր պետականություն — ահա, ըստ հեղինակի մեկնաբանության, Արշակի քաղաքական ընթացքը բնութագրող գերագույն նպատակը։

Վիպական առանձին պատկերներում հեղինակն անդրադառնում է նաև Արշակի անձնական հատկություններին։ Արշակը, ըստ Զորյանի մեկնաբանության, պետական գործերում համբերատար է ու շրջահայաց, սիրում է ունկընդրել ուրիշներին, կշռադատել ու քննել վիճակը իր ավագ պալատականների հետ։ Արշակի համար բնորոշը եղել է պետական ողջախոհությունն ու վարվելակերպի մեծ տակտը։ Այսպես, օրինակ, բերդատեր նախարարների հանդգնությունն ու կամակորությունը մեծ վրդովմունք են պատճառել Արշակին, անչափ զայրացել հայոց արքան, բայց խուսափում է անհապաղ և մենակ վճիռ ընդունելուց ու կացությունը քննելու համար հրավիրում է ավագների խորհուրդ։ Հեղինակն այս առթիվ ծանոթագրում է. «Արշակը որևէ ծանր խնդրի առաջ գտնվելով կամ որևէ դժբախտության հանդիպելիս՝ հավաքում էր ավագներին և լսում նրանց կարծիքները, չասելով իրենը, ստուգում էր անելիքը և ընդհանրապես շոշափում տրամադրությունները» (139)։ Այս հանգամանքը նրան չի խանգարում անհրաժեշտ դեպքում ընդունել կտրուկ որոշումներ և մեծ վճռականությամբ ի կատար ածել դրանք։

Դառնանք Արշակի ու դժգոհ նախարարների ներհակությունների զարգացման հետագա ընթացքին։ Նախարարները, ներքին երկյուղ զգալով, բացահայտ ապստամբությունը առայժմ վտանգավոր են համարում և Կամսարական Ներսեհին պատվիրակ են ուղարկում երկրի հոգևոր առաջնորդի մոտ, որ սա համոզի թագավորին՝ ետ վերցնելու իր վերջին հրովարտակն ու վերադարձնի իրենց «տիրափախ» ծառաներին։

Կամսարական իշխանը կաթողիկոսին հայտնելով, թե՝ «Հատուկ ժամանել եմ դժգոհ իշխանաց կողմից, որ վեհդ կարդի հրավիրի Արշակ թագավորին, այլապես մենք ևս կդիմենք խստագույն միջոցի» (276), նաև սպառնում է, որ եթե Արշակը շարունակի իր ընթացքը և չկատարի իրենց պահանջները, «իրենք ևս կդառնան տիրասպան...»։ Ներսեսը որոշ տատանումից հետո հանձն է առնում միջնորդի դերը, թեև հավատացած չէ, թե հաջողությամբ կավարտվի իր առաքելությունը։ Եվ, իսկապես, արդարանում են նրա կասկածները։ Չնայած Ներսեսի հորդորներին և անգամ խիստ նախազգուշացումին՝ նախարարների նկատմամբ նրա բռնած դիրքի «ծանրածանր հետևանքների» մասին, թագավորը չի համաձայնվում ետ վերցնելու իր հրովարտակը՝ Արշակավանի կառուցումն ավարտելու իր վճռի մեջ մնալով անդրդվելի ու անդիջում։ Ներսեսի ու Արշակի տեսակցության նկարագրությունը առաջ է տարվում վարպետորեն կառուցված երկխոսություններով, որոնք մեկ անգամ ևս բացահայտում են Արշակի քա-

դաքական բնութագիրը, ընդգծում նրա պետական մեծ գործչի հատկությունները։

Ներսեսի ապարդյուն առաքելությունից հետո դեպքերն առավել լարված ու բուռն ընթացք են ստանում. երկու կողմն էլ համառում են, որի հետևանքով նրանց փոխհարաբերությունները սրվում են այն աստիճան, որ նախարարները չենքի են դիմում ու միացյալ ուժերով հիմնահատակ կործանում քաղաքը, սրածում նրա բնակիչներին ու գերեվարում կենդանի մնացածներին։

Արշակավանի կործանման փաստը տարբեր կերպ են ներկայացնում Խորենացին ու Փավստոսը։ Վերջինս այն վերագրում է Ներսեսի անեծքի հետևանքով առաջացած ժանտախտին։ «Եւ սկսաւ հատանել,— գրում է պատմիչը,— ոոոարակեղն իմն կոչեն, իսկ կէսքն ժանդ անուանեն. ելանէր ի վերայ մարդկանն և անասնոցն։ Ոչ ավելի եղև հարուածոցն ի վերայ նոցա քան ղերիս աւուրս յերկարեցաւ, զի անմարդացաւ. քան զքսան հազարք սատակեցան երդք մարդկան, ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի. զի առ հասարակ սատակեցան կոտորեցան յանկարծօրեն քանդեցան. զի միահաղոյն եկն սատակումն ի վերայ նոցա»[2]։

Բրողությունն այլ կերպ է ներկայացնում Խորենացին. «Եւ նախարարացն Հայոց ժողովեալ դիմեցին ի վերայ արքունական ձեռակերտին Արշակավանի, և հարին զնա սրով սուսերի յառնէ մինչև ցկին, բայց ի տղայոց ստնդիացաց. քանզի դառնացեալք էին իւրաքանչիւր ի վերայ ծառայից իւրեանց և յանցաւորաց»[3]։

Վեպի համապատասխան դրվագի համար Զորյանը հիմք է ընդունել Խորենացու վկայությունը։ Վարպետորեն հյուսելով պատմականն ու վիպականը, հեղինակը կերտել է Արշակավանի համար մղված կռվի ու նրա կործանման իրապատում պատկերը։ Էպիկական մեծ շնչով, հոգերանական ինքնատիպ վերլուծություններով հարուստ այդ նկարագրությունը Զորյանի վեպի լավագույն կտորներից մեկն է։ Արշակը այստեղ հանդես է գալիս իբրև մի շեշտված անհատականություն, պետական շահերով առաջնորդվող աչքի ընկնող մի գործիչ, բարդ ու հակասական բնավորությամբ, իր դաժան դարի առանձնահատկություններով պայմանավորված գործելակերպի տիպական գծերով։ Վիպական դեպքերի նշմարտացի նկարագրություններում հեղինակը գեղարվեստորեն համոզում է, որ Արշակի դաժան քայլերը թելադրվում են պատմական անհրաժեշտությամբ, բխում են հասարակաց օգուտից։

Նպատակին այնպիսի մեծ համառությամբ հետամուտ եղող Արշակը, որին սեծ ցավ ու զայրույթ է պատճառել Արշակավանի կործանման փաստը, և որը որոշել էր անհապաղ «սաստիկ պատժել» երդմնաղանց ու հանդուգն նախարարներին, լրջորեն կշռադատելով իրադրությունը, կանխագուշակելով հետագա ընդհարումների ծանր հետևանքները՝ երկրի ընդհանուր քաղաքական վիճակի տեսակետից, առավել խոհեմ է դիտում առայժմ չշարունակել արյունահեղությունն ու համաձայնվել Ներսեսի արած հաշտության առաջարկին։

Զինադադարից հետո մոայլ մտքեր են պաշարում Արշակին։ «Հակառակորդները թեև նեղում էին խնդրում և հնազանդություն հայտնում,— մտածում է նա,— բայց նրա բարկությունն ու զայրույթը չէր զոհանում դրանով։ Եթե նրանք ժամանակին չկատարեցին իր պահանջները՝ բերդեր ու զինվոր տալու—

2 Փավստոս, էջ 174։
3 Խորենացի, էջ 289։

դա սովորական էր և հասկանալի, ուստի և քիչ էր վրդովում։ Սակայն այս, որ նրանք ավերել են տարիների ջանքերով կառուցած քաղաքի թաղերը, նրա ցավը փոխվում էր զայրույթի։ Թվում էր նրան, թե խորտակել են իր պետության հիմքը, երկիրն ամրացնելու իր բոլոր երազները... Լավ էր, այո, որ լսեց կաթողիկոսի խորհուրդը և դադարեցրեց կռիվը. բայց Ավա՞նը, բայց բե՞ղը... Ո՞վ պիտի հատուցի իր կորուստը... Ինքը, այո, չուզեց հանցապարտների պատնառով կոտորել զինվոր ու ժողովուրդ, բայց քաղաքն ավերողները մի՞թե պիտի մնան անպատիժ» (437—438)։ Այս խոհերն են, որ կուտակվելով ու զարգանալով՝ Արշակին հանգեցնում են ոճրապարտ ու ապստամբ նախարարներից դաժան վրեժ լուծելու մտքին։

Հիշենք, թե ինչպես են ներկայացնում մեր հին պատմիչները Արշակի՝ նախարարներին պատուհասելու փաստը։ Համաձայն Փավստոսի, Արշակը «ըստ կամաց չարութեան իւրոյ գնացեալ լինէր... և զբազումս ի նախարարացն կոտորեաց, զբազումս ազգատ արարեալ անճիտեաց, և զբազմաց տունս հատանէր յարքունիս։ Բայց զտոհմս Կամսարականացն՝ որ էին գաւառաց տեարք, Շիրակայ և Արշարունեաց, ազգատ առնէր. և զգաւառսն ունէր յոստան»[4]։ Նույնը հաստատում է նաև Խորենացին՝ ավելացնելով որոշ մանրամասնություններ. «Ի հեռանալ մեծին Ներսեսի՝ ստեաց Արշակ ամենայն ուխտիցն, զոր եդ ընդ նախարարսն, և խնդրեաց զքէն ձեռակերտին իւրոյ Արշակաւանու։ Եւ կոտորեաց զբազումս ի նախարարացն, մանաւանդ զազգն Կամսարականաց բառնայր ի միջոյ, շարակնելով ագահեալ յամուրն Արտագերս և ի քաղաք ոստանի նոցա Սրուանդաշատ։ Եւ կոչեալ առ ինքն ի լքեալ արքունիսն Արմաւիր իբր զազգականս իւր, ի պատճառս պատուոյ մեծարանաց, միահաղոյն զարս և զկանայս հանդերձ մանկամբք հրամայեաց կոտորել։ Եւ ոչ ոք ի նոցանէ ապրեցաւ, բայց Սպանդարատ որդի Արշաւրի...»[5]։

Կարծում ենք, որ միանգամայն ճիշտ է վարվել հեղինակը այս փաստը ևս, ի շարս այլ իրողությունների, օգտագործելով թագավորի ու նախարարների ներհակությունների բուն էությունը ճշմարտացի արտացոլելու դարաշրջանի ոգուն համապատասխան մարդկային անհատականությունները տիպականացնելու համար։

Վիպական գործողությունների ընթացքից պարզ է դառնում, որ Արշակը դառն փորձով համոզվել է, թե ինչ արժեք ունեն նախարարների հպատակության երդումն ու հավատարմության ուխտը։ Նրան քաջ հայտնի է, որ նախարարներն իրենց զինված գործողությունները կարող էին հասցնել մինչև վերջ՝ նույնիսկ չկանգնելով իրեն գահազուրկ անելու առաջ, եթե չհանդիպեին արքունի զորքի դիմադրությանն ու չվախենային, թե Արշակը օգնական զորք կկանչի հարևան երկրներից (վեպում ակնարկվում է Վրաստանից օգնական զորք բերելու Արշակի մտադրության մասին)։ Արշակը խորապես հավատացած է նաև, որ իրադրությունը փոխվելու դեպքում նախարարները կարող են նորից գլուխ բարձրացնել և այս անգամ արդեն, Արշակավանի դեպքերից հետո, ունենալով Հայաստանի անկախությունը ոչնչացնելու միտող տեսությունների՝ մասնավորապես պարսիկների օժանդակությունը (որոնց հետ մութ գործարքների մեջ էին Մերուժան Արծրունին ու Վահան Մամիկոնյանը), նրանց հարձակումը կլի-

4 Փավստոս, էջ 199—200։
5 Խորենացի, էջ 294—295։

նի առավել հանդուգն ու կատաղի։ Եվ նա որոշ տատանումից հետո ընդունում է նախարարներին Արմավիրի ամրոցում դավադրաբար պատուհասելու վերջնական ու անխախտ վճիռը։

Ուշագրավ է, որ նույն հայեցակետով է գնահատել Արշակի ընթացքը նաև Պաֆֆին Անհուշ բերդում Արշակ թագավորի հայտնի մենախոսության մեջ։

Չորյանը առաջնորդվել է կյանքն իր բարդ հակասություններով, դրամատիկական ու ողբերգական եղելություններով ճշմարտացի վերակենդանացնելու անհրաժեշտության սկզբունքով, պատմական ճշմարտությունը, որքան էլ այն դառը լինի, իր ողջ բարդությամբ ընթերցողին ներկայացնելու միտումով։

Վիպասանը խոր պատմականության է հասել ոչ միայն դարի ընդհանուր ոգին բնորոշող քաղաքական կյանքի տարբեր միտումների բախումների ճշմարտացի պատկերման բնագավառում, այլև պահպանել է հարազատությունը պատմական հայտնի փաստի նկարագրության մեջ, ցույց տալով, որ պատմական զարգացման առաջավոր ուղեգիծը կրող նշանավոր գործչի դաժան քայլերը վերջիվերջո պայմանավորված են իր դարի յուրահատուկ պայմաններով։ Հարազատ մնալով պատմական փաստերին, Չորյանը դրանով բնավ էլ «ջուրը չի գցել Արշակին արդարացնելու» իր նկատելի «ջանքերը», ինչպես նշել է «Հայոց բերդի» գրախոսներից մեկը[6]։ Ընդգծելով Արշակի բարդ անհատականությունը, նրա բնավորության հակասական էությունը՝ վիպասանը տվել է նրա արարքի պատմա-հոգեբանական պատշաճ հիմնավորումը՝ Արշակի դաժանությունը ներկայացնելով իբրև իր դարի համար երկրի քաղաքական շահերից բխող մի անհրաժեշտ քայլ։ Գործողությունների զարգացման տրամաբանական ուժով վիպասանը և՛ իբրև պատմաբան, և՛ իբրև գեղագետ պատճառաբանել է Արշակի եղերական քայլը, որը այլ պարագաներում, անշուշտ, կդիտվեր իբրև բռնակալ արքայի անմիտ մի ոճրագործություն։ Չորյանի երկի պատմականության բնորոշ գիծը հենց այն է, որ նա այստեղ գեղարվեստորեն համոզում է, որ այդ պահին, ստեղծված բարդ իրադրության պայմաններում, թագավորն այլ կերպ վարվել չէր կարող, հակառակ դեպքում կործանման իրական վտանգի տակ էր դրվելու երկրի հզորացման և օտարի գերիշխանությունից ազատ ու անկախ տերություն ունենալու մեծ գործը։

Ուշադրության է արժանի այն բացատրությունը, որ տալիս է Արշակը իր արարքին։ Իրեն հանդիմանող Վասակին թագավորը պատասխանում է. «Ես, սպարապետ, այլ կերպ չէի կարող։ Այս էր պահանջում Հայոց Աշխարհի հանգրստությունը... Մի զարմանար, սպարապետ սիրելի։ Դու իրազեկ չես նոցա եղեռնագործությանց։ Լսած ես, որ ավանն ավերելուց հետո ես կամեցա խստիվ պատժել նոցա՝ զենքով ելան դեմս. և մենք ճակատեցինք օրերով... ապա քահանայապետի միջոցով ցանկացան հաշտվել։ Ես հոժարեցի, խորհելով, որ կստիպեմ նոցա նորոգել իրենց ավերած ավանը... Սակայն նոքա եղան ուխտապրուժ ու ննդ. ծածուկ կոտորեցին գերի վարած հարյուրավոր մարդիկ, դրանց մեջ նաև Ավանիս շահապ Վարազ իշխանի որդոց, և այդ տակավին ավաղներից չգիտի ոչ ոք... Ես կամեցա մեր առաջին տեսությանը այս ամենը պատմել քեզ և հարցնել խորհուրդդ... ու ես իմ զայրույթը պահեցի ցայսօր...» (451)։

---

6 Տե՛ս «Երևան» օրաթերթ, 1960, 6 մարտի, № 56։

Ծանր նզովք է ուղղում Արշակին Ներսեսը՝ նրա գործած ոճիրի համար, բայց թագավորը դարձյալ իր արարքի հիմնավորումը կապում է երկրի ապահովության կարևոր խնդրի հետ։

Այստեղ վիպասանը միանգամայն համամիտ է իր հերոսին։

Զորյանը դարաշրջանի քաղաքական մեծ բախումների պատկերին մի շարք դեպքերում կարողացել է օրգանապես միաձուլել իր հերոսների հոգեբանական աշխարհի նուրբ վերլուծությունները։ Արշակի՝ ուժեղ կամքի ու հզոր անհատականության տեր պետական այդ գործչի մեջ նա միաժամանակ ընդգծել է նաև մարդկայինը, նրա հոգեբանական խոր ապրումները տեղի ունեցած եղեռնագործությունից հետո։ Հոգեկան մեծ պայքար է ապրել նա՝ ապստամբ նախարարներին դավաղրաբար պատուհասելու մտքին հանգելով, բայց հիմա, երբ փաստն արդեն կատարված է, Արշակը թեև դարձյալ արդարացնում է իր քայլը իբրև պետական գործիչ, բայց իբրև մարդ խորապես զգում է իր արարքի արտակարգ ծանրությունը։ Որքա՜ն բնորոշ է այս տեսակետից Արշակի ու Փառանձեմի երկխոսությունը, որն անմիջապես հաջորդում է եղեռնագործության առթիվ Արշակի և Վասակի ու Ներսեսի բուռն վեճերին։

Իր դաժան դարի հարազատ զավակը, հանուն պետական մեծ նպատակների, ոչ միայն կարող է անգթորեն սրի քաշել իր դեմ ապստամբած նախարարներին, այլև ունակ է խաչի առաջ աղոթել ու արտասվել՝ իբրև սովորական մի մարդ։ Թագավորի ու կենտրոնախույս նախարարությունների բնորոշ ներհակությունների առանձին հետաքրքրական մոմենտներ Զորյանը տվել էր իր անդրանիկ պատմավեպում՝ հարակցելով դրանք ազատագրական մաքառումի իրողություններին։

Հատկանշական է, որ Պապը, ըստ վիպասանի միտումի, թեև լրիվ համաձայնում է հոր քաղաքական ծրագրերին ու նպատակին, ամբողջովին ընդունում է նաև երկրի տարանջատ ուժերի միավորման առաջնահերթ նշանակությունը երկրի անկախության համար, բայց կարծես այնքան էլ համամիտ չէ հորը միավորման բռնի մեթոդների խնդրում և հիշելով հոր ձախողումը Արշակավանի հարցում, տարակուսում է, թե «պե՞տք էր արդյոք այդպես անել»։ Պապն անգամ պատրանք է տածում, թե առանց «երկաթե գավազանի» էլ կարելի է գահի միահեծանությանը ենթարկել ինքնիշխան ու անմիաբան նախարարներին, եթե լավ կիրառվեն «համոզելու», «հասկացնելու» եղանակները։ Այդ միտումը նկատելի է մասնավորապես «Պապ թագավորի» վերջին դրվագներում, որտեղ ընդգծվում են Պապի «համոզելու քաղաքականության» հաջողությունները (օր., Պապի այցելությունը Հավնունի նախարարի ամրոցը և այլն)։

«Հայոց բերդում» Զորյանը առանձնակի ուշադրություն է դարձրել կենտրոնացած պետականության հակոտնյա գլխավոր ուժի՝ կենտրոնախույս նախարարությունների առանձին ներկայացուցիչների տիպականացմանը, վիպական գործողությունների մեջ հանդես բերելով ուժեղ, կենդանի անհատականություններ։ Հենց այսպիսի կերպարների միջոցով է, որ հեղինակին հաջողվել է առավել արտահայտիչ ու ճշմարտացի ներկայացնել դարաշրջանի իրականության էական գծերը, մասնավորապես ֆեոդալական ինքնագլխության ներքին էությունը, շեշտել պատմական կյանքի իրարաՀերժ միտումների բախումները։ Կասկած չկա, որ Արշակի կերպարը չէր ունենա ներգործոն այն ուժը, եթե նրա հակառակորդ բանակի մարդիկ հանդես բերվեին իբրև թուլակամ ու ողորմելի

անձնավորություններ։ Ջորյանի երկրորդ պատմավեպը այս տեսակետից որոշակի առաջընթաց է «Պապ թագավորի» համեմատությամբ։

«Հայոց բերդի» մեջ ընթերցողը հանդիպում է նախարարների հաջող կերտված կերպարների մի շարքի, որոնցից ամեն մեկը յուրովի մարմնավորում է դարի ու դասի բնորոշ գծերը, մարդկային փոխհարաբերությունների, բնավորության ու հոգեբանության տիպական հատկությունները։ Առավել հաջողված կերպարների թվին են պատկանում Վահե Վահևունին, Դավիթ Համունին և, առանձնապես՝ նախարարական ապստամբության զեկավար Ներսեհ Կամսարականը։ Վերջինս իր դարի ու դասակարգի հարազատ ծնունդն է, Արշակունյաց կենտրոնական պետականության համոզված թշնամին, նախարարական եսասիրության, նրա կենտրոնախույս նկրտումների կենդանի մարմնացումը։

Հայտնի է, որ պատմավիպասանից պահանջվում է խոր պատմական մոտեցում իրական դեմքերի բնութագրի էական կողմերն արտահայտող փաստերի գեղարվեստական պատկերման ու մեկնաբանության մեջ։ Այստեղ հեղինակի կատարած ամեն մի քիչ թե շատ չպատճառաբանված նահանջը պատմականությունից, բնականաբար, չի կարող ակնհայտ չափով չվնասել պատմական իրականության գեղարվեստական ճանաչողությանը։ Այդպիսի նահանջ տեսնում ենք, օրինակ, Արշակի, Գնելի ու Տիրիթի փոխհարաբերությունների շուրջը հյուսված վիպական կոնֆլիկտում, որի մեկնաբանությամբ ու լուծումով հեղինակը ոչ միայն չի տվել դեպքերի զարգացման քիչ թե շատ համոզիչ պատճառաբանությունն ու պատմա-հոգեբանական հիմնավորումը, այլև բացահայտ հակասության մեջ է մտել իրական փաստերի հետ։

Թագավորը հուզված է ու զայրացած Արշակավանի շինության պատճառով նախարարների հանդուգն մերժողական պատասխանի առիթով, և հենց այդ պահին գալիս է Տիրիթը ու ամբաստանում Գնելին, հայտնելով թե Գնելը, արքայահոր հետ համախորհուրդ, գալ է նյութում Արշակի դեմ, նպատակ ունի զահընկեց անել նրան ու դառնալ թագավոր։ Արշակն սկզբում լսածին չի հավատում. նա Գնելին գիտե իբրև գրական անձնավորություն, մանավանդ, որ ինքն էլ վատ բան չի արել նրան, որևէ ձևով ոչ միայն չի սահմանափակել նրա իրավունքները, այլև նույնիսկ ավանդական կարգը խախտելով արտոնել է բնակվել Կավաշում՝ պապի մոտ։ Բայց Արշակի մոտ աստիճանաբար խորանում են կասկածները և նա խորհում է. չէ որ Գնելն իր ավագ եղբոր որդին էր և ավագության կարգի համաձայն «նրա հայրը պիտի լիներ զահակալ», եթե կենդանի մնար, իսկ նրանից հետո զահակալության իրավունքը Գնելին էր անցնում։ «Անհավանական չէ, անշուշտ, մտածում է Արշակը, որ Գնելն ամուսնությունից հետո ձգտի և փառքի. կամենա դառնալ զահակալ... բոլոր արքայազների երազն է այդ» (105)։ Արշակը նույնպես մտածում է, որ «Գնելն անկասկած մենակ չէ իր ձգտումի մեջ... Եվ Արշակին թվում էր, թե նրա ետև կանգնած են անշուշտ իր հակառակորդները, զուցե և թշնամիները։ Առաջինը թեկուզ իր հայրը, որ տակավին չի կամենում հաշտվել իր զահազրկության հետ և թերևս նա է դրդում Գնելին այդ քայլն անելու...» (105)։ Արշակին միանգամայն հնարավոր է թվում իրենից դժգոհ նախարարների ու Գնելի զաղտնի համաձայնության հանգամանքը։ Եվ ահա վիպասանը հարում է. «Արշակը լսել էր, որ թագավորահայրը սիրում է սպանված ավագ որդու ժառանգին՝ Գնելին. սիրում է այնչափ, որ նրա հարսանիքի օրը իր բաժին կալվածքներն ու հարստությունը նվիրաբերել է Գնելին, իսկ Գնելը Բյուզանդիոնից բերած ոսկեղենն ընծայաբերել է հարսանիք և-

կած նախարարներին և նրանց որդիներին, ահա ինչու և ամենքը սիրում են նրան և իրենց որդոց ուղարկում նրա մոտ՝ զենքի վարժության» (109)։ Արշակը, նկատի առնելով նախարարների վարքագիծը, մտածում է, որ նրանք ապավինում են մի հզոր հենարանի՝ Գնելին. ինչո՞ւ մինչև վերջինիս՝ Կավաշ բնակվելը նախարարները չունեին այդ համարձակությունը. «Արշակը ուստի, անհավանական։ չէր համարում, որ իր դժգոհ նախարարները, դավելով իր դեմ, դահ կբարձրացնեն նրան...» (149)։ Նա հնարավոր է համարում նաև, որ Գնելը կարող է ուղարկված լինել կայսեր կողմից. «Արշակը մտածեց,— հարում է հեղինակը,— որ դա ևս կարող է լինել։ Թերևս կայսրը դժգոհ է իրենից և կամենում է իր փոխարեն թագավորեցնել Գնելին։

...Անհավանական չէ և այդ...» (154)։

Մի պահ թվում է, թե վիպասանը բացահայտում է դարերի խորքում կորած բարդ իրադարձությունների բուն էությունը և կարծում ես, թե հետագա վիպական գործողությունների մեջ այս ամենը պիտի ստանա իր ճշմարտացի արտացոլումը։ Սակայն վիպական դեպքերը ծավալվում են այլ ուղղությամբ, և հեղինակը, հեռանալով իրականությունից, այդ ամենը ներկայացնում է իբրև արդյունք ցավալի թյուրիմացությունների, պատահական զուգադիպությունների, անհիմն կասկածների։

Այդպիսիք են, օրինակ, Գնելի վերաբերյալ Արշակի կասկածների ստուգման հանգամանքները։ Տիրիթից ստացած լուրի հավաստիությունն ստուգելու նպատակով Արշակը Կավաշ է ուղարկում սենեկապետ Վարդ Մամիկոնյանին։ Վերջինս Կավաշում մնում է մեկ օր, և, ինչպես կարելի է մեկնաբանել վեպի համապատասխան հատվածից, ըստ էության չի հայտնաբերում որևէ լուրջ փաստ, որը մինչ այդ անհայտ լիներ Արշակին և կամ կարող լիներ հաստատել Գնելի թագապահանջական դավադիր ընթացքը, բացառությամբ, թերևս, այն հանգամանքի, որ արքայազնին, նրա երիտասարդական զվարճությունների՝ որսախաղերի մեջ, ի շարս այլոց, ընկերակցում են Արշակից դժգոհ նախարարների որդիները։ Ո՛չ հոգեբանորեն և ո՛չ էլ զարգացման տրամաբանական ընթացքով չի հիմնավորվում այն պարագան, թե Վարդի հաղորդածները թագավորին կարող էին վերջնականապես համոզել իր հարազատի կողմից իր դեմ սարքվող դավադրության իսկության մեջ։ Գեղարվեստորեն չի պատճառաբանված հեղինակի այն միտքը, թե «մտածելով Արշակը համոզվում էր, որ Վարդի բերած լուրերը հաստատեցին Տիրիթի խոսքերը և իր կասկածները Գնելի նկատմամբ» (149)։

Անհամոզիչ ու չպատճառաբանված են և Արշակի տատանողական վճիռները Գնելի վերաբերյալ։ Իր դեմ նյութվող դավադրության մեջ համոզված Արշակը մեկ որոշում է «չարիքը կանխելու» համար Գնելին անմիջապես հեռացնել Կավաշից, անգամ՝ պատուհասել անհապաղ, մեկ էլ՝ հանկարծ փոխելով վճիռը, որոշում է արքայազնին հրավիրել Շահապիվանի նավասարդի տոնին՝ հետը «անձամբ անձին» խոսելու նպատակով «նախապես շնորհավորելով ամուսնությունը, ընծաներ տալով իրեն ու իր հարսին... դա կլիներ առավել խելացի... դա կուրախացներ և արքայահորը...» (155)։ Արշակը մտածում է այդ ձևով «սիրաշահել Գնելին, որ նա, տակավին անփորձ պատանին, չընկնի չարանենգ նախարարների ազդեցության ներքո» (154), խորհում է նույնիսկ, որ «թեև կարգ չէ և ընդունված չէ, բայց կարելի է գուցե հանձնել նրան և բարձր մի

պաշտոն արքունիքում... այսպես նա հեռու կլինի դժգոհ նախարարներից» (154) և այլն։

Այս ամրողջը, Արշակի խոհերն ու ապրումները, զուցե և մարդկայնորեն բնական ու հասկանալի են թվում, սակայն իրենց էությամբ հակասում են պատմական դեպքերի զարգացման իրական ընթացքին և հավանական չեն պատմականորեն։

Դրանում առավել խորն ենք համոզվում դեպքերի հետագա ընթացքին հետևելով։ Բանակցությունների նպատակով կնոջ հետ միասին հրավիրված Գնելը զավաղրարար սպանվում է Տիրիթի ձեռքով՝ դեռևս Շահապիվան չհասած։ Արշակն ամենևին անտեղյակ է դավին։ Դրան հաջորդում են Տիրիթի պատուհասման, ապա և Արշակի ու Փառանձեմի սիրո պատմությունները։

Գնելն իրականում եղել է ժամանակի ականավոր քաղաքական եռանդուն գործիչներից, բյուզանդական կողմնորոշման հոսանքի պարագլուխներից մեկը, որի պայքարն Արշակի դեմ խթանվել է նաև թագապահանջական-եսասիրական դրդումներով[7]։ Սրա փոխարեն վեպում Գնելը հանդես է բերվում իբրև մի մարդ, որը բացարձակապես ոչ մի առնչություն չի ունեցել ժամանակի կյանքն ալեկոծող իրադարձությունների հետ։ Այս պատճառով էլ Զորյանի Գնելը ոչինչ ընդհանուր չունի իր պատմական իրական նախատիպի հետ (բայց ոչ այն նախատիպի, որ ներկայացվում է Փավստոսի բերած ավանդական զրույցում)։

Թագավոր որդու և գահազուրկ արքայահոր՝ իրականում շատ բարդ փոխհարաբերությունների պատկերման մեջ ևս վիպասանն ընթացել է իրականում շատ խճճված հանգույցի պարզեցման ուղիով։ Տիրանի ու նրա որդու փոխհարաբերությունների բնորոշ հանգամանքները վիպական կենդանի գործողություններ չեն դառնում և նույնիսկ ավելորդ են թվում, երբ նկատի ենք ունենում կոնֆլիկտի այն լուծումը, որ տալիս է Զորյանը։

Վիպական հյուսվածքի մեջ Արշակի ու Տիրանի փոխհարաբերությունների նկարագրությունը հեղինակն աշխատել է զուգակցել Արշակ-Գնել հանգույցին։ Սակայն «Հայոց բերդում» անտես է առնված գլխավորը։ Դա պապի ու թոռան հասարակական-քաղաքական հիմքի վրա բարձրացած դաշնակցությունն էր Արշակի դեմ, երկու կողմերի կատաղի բախումները, որոնք իրականում ավարտվել են Գնելի սպանությամբ ու Տիրանի խեղդամահ արվելով։ Մինչդեռ ըստ Զորյանի՝ Արշակը միանգամայն անհաղորդ է եղերական այս դեպքերին, և նրա հայրասպանությունը լոկ թշնամիների տարածած հերյուրանք է։

Առաջին հայացքից կարող է թվալ, թե պատմականությանը հեղինակը հավատարիմ է մնացել Տիրիթի կերպարի կերտման հարցում։ Զորյանը հետևել է Փավստոսի մոտ պահպանված հայտնի ավանդական զրույցին, որի մեջ, այլ փաստերի հետ միասին, Տիրիթի բնութագիրը ևս էական փոփոխությունների է ենթարկված ու վիպական հանգամանքներով զարդարված։ Տիրիթը ժամանակի այն գործիչներից էր, որն իր քայլերի գլխավոր շարժառիթներն ստանում էր քաղաքական միանգամայն որոշակի նպատակադրումից ու դրդապատճառներից։ Նա Վարդ Մամիկոնյանի ու իր մյուս համախոհների հետ գլխավորում էր պարսկասեր հոսանքը, և հենց այս հողի վրա էլ իրականում ծավալվել է նրա պայքարը

7 Այս խնդիրների քննությունը տե՛ս մեր «Գնել-Տիրիթյան վիպական ավանդության պատմական հիմքի հարցի շուրջը» հոդվածում («Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 4, էջ 83—100)։

մի կողմից՝ ընդդեմ բյուզանդական կողմնորոշման հոսանքի ու Գնելի, իսկ մյուս կողմից՝ ընդդեմ Արշակ թագավորի։ Զորյանը Տիրիթի բնութագրման համար մեջտեղ է բերել նրա տափանքի, քսության ու խարդավանքի փաստերը։ Սակայն կարծում ենք, որ կերպարի ռեալիստական բնութագրության համար նա առաջնահերթը պիտի դարձներ իրականն ու բնորոշը՝ Տիրիթի քաղաքական վարքագծի էական հանգամանքները։

Տարակույս չկա, որ վեպը շատ կշահեր, եթե հեղինակը քննական մոտեցման ճանապարհով ավելի խոր թափանցեր պատմական իրադարձությունների ծալքերի մեջ ու կերպարի հիմքում դներ ոչ թե կենցաղական մանրուքներն ու մարդկային կրքերի չնչին դրսևորումները (որոնք նույնպես կարող էին տեղ գտնել վեպում), այլ առաջին հերթին Տիրիթի պարսկական կողմնորոշման, նրա քաղաքական գիմանկարը բնորոշող իրական հասարակական շարժառիթները, պատմականորեն տիպական ու հավաստի փաստերը։

Այստեղ հարցը վերաբերում է ոչ միայն պատմական այս կամ այն դեմքի ճշմարտացի բնութագրմանը, այլև, որ առավել կարևորն է, այն բանին, թե հեղինակի մեկնաբանությունները որքանով են նպաստել կամ խանգարել դարաշրջանի պատմական կյանքի էական առանձնահատկությունների բացահայտմանն ու ճշմարտացի արտացոլմանը։ Երբ խնդրին մոտենում ենք այս հայեցակետով, ապա ակնհայտ է դառնում հեղինակի վրիպումը տարբեր կողմնորոշման հոսանքների պայքարի ռեալիստական արտացոլման առումով։

«Հայոց բերդում» Արշակի կենսագրության փաստերի շուրջ դարձող վիպական հանգույցներում, մասնավորապես՝ Արշակ-Գնել-Տիրիթ փոխհարաբերությունների նկարագրությունների մեջ ընթերցողը հանդիպում է մի պատմական անձնավորության ևս. դա արքայի սենեկապետ, Վասակ սպարապետի եղբայր Վարդ Մամիկոնյանն է։ Սա ևս Արշակի գահակալության շրջանի աչքի ընկնող գործիչներից, պարսկական կողմնորոշման հոսանքի պարագլուխներից մեկն է։

Վարդի կերպարի զարգացումը վեպում տրված է քաղաքական ներհակ կողմնորոշումների կատաղի պայքարի ոլորտից դուրս։ Այստեղ, իսկապես, վիպասանը չի համողում, եթե, մանավանդ, նկատի ունենանք, որ խոսքը վերաբերում է Մամիկոնյան նախարարական տան նահապետին ու արքունիքում մեծ դիրք ունեցող պալատական պաշտոնյային։ Բնական չէ, որ ընթերցողը Վարդին տեսնում է միայն Արշակի որոշ գաղտնի հրամանները կատարողի ու երիտասարդ արքայազն Տիրիթի ձեռքին ակամա գործիքի դերերում։

Հեղինակը պահպանել է իրական փաստը, Վարդն սպանվել է Արշակի հրամանով, սակայն փաստի գեղարվեստական մեկնաբանությունը չի տարել տիպական հանգամանքների ճշմարտացի նկարագրության հունով, այդ սպա-

---

8 Նկատենք, ի դեպ, որ, ինչպես երևում է հպանցիկ մի ակնարկից, Ռաֆֆին զարմանալի խորաթափանցությամբ ժամանակին կռահել է Տիրիթի (ինչպես և Վարդ Մամիկոնյանի) քաղաքական ընթացքի բնորոշ կողմը. Սամվելի բերանով վիպասանը այս առթիվ շատ ուշագրավ մի դիտողություն է անում. «...Երբ իմ հորեղբայր Վարդանը արքայազն Տիրիթի հետ ապրստամբվեցին մեր Արշակ թագավորի դեմ և դիմեցին պարսից Շապուհ արքային,—դարձյալ իմ հորեղբայր Վասակն էր, որ դնաց նրանց հետևից, և ճանապարհին բռնելով սպանեց թե՛ Տիրիթին, և թե՛ յուր եղբորը... նրա ձեռքը չդողաց թափել յուր հարազատի արյունը, որ դավաճանում էր յուր թագավորին ու յուր հայրենիքին...» (Ռ ա ֆ ֆ ի, Երկերի ժողովածու, հատ. 7, Երևան, 1956, էջ 33)։

նությունը պատճառաբանելով անձնական պարագաներով, մինչդեռ իրականում, այն պայմանավորված է եղել քաղաքական լուրջ հանգամանքներով[9]։

Վեպը շատ բանով կշահեր, անշուշտ, եթե վիպասանը Արշակի դաժան ապարքները (հարազատների սպանության փաստերը) հերքելու փոխարեն դրանց ներկայացներ իբրև հավաստի իրողություններ (ինչպես իրականում եղել են), տալով դրանց խոր, բազմակողմանի ու ճշմարտացի պատմա-հոգեբանական մեկնաբանությունը։ Դա ոչ միայն որևէ չափով հեղինակին չէր խանգարի հաճոյիչ պատկերներով ընդգծելու Արշակի քաղաքականության պատմական առաջադեմ դերը, ներկայացնելու նրան իբրև մի բարդ ու հակասական մարդկային կենդանի անհատականություն, այլև, ընդհակառակը, մեծապես կնպաստեր դրան։

* * *

Դարաշրջանի փոթորկահույզ իրականության մեջ լայն տեղ էին գրավում երկրի աշխարհիկ և հոգևոր իշխանությունների յուրահատուկ հակամարտությունները, որոնք առանձնապես սուր բնույթ էին ստացել Արշակ Բ-ի և Պապի գահակալության ու Ներսես հայրապետի աթոռակալության տարիներին։

Ահա թե ինչու միանգամայն արդարացի է, որ Զորյանն իր պատմավեպերում բավական ընդարձակ տեղ է հատկացրել Արշակունի թագավորների ու կաթողիկոսների բարդ փոխհարաբերությունների պատկերմանը։ Այդ փոխհարաբերությունների որոշ գծերին վիպասանն անդրադարձել է «Հայոց բերդի» մեջ, բայց իրական մեծ կոնֆլիկտի առավել կարևոր կողմերի խոր ու համակողմանի արտացոլումն իրականացրել է «Պապ թագավոր» վեպում։

Զորյանը տիպական հանգամանքների նկարագրությամբ ցույց տվեց, որ հոգևոր և աշխարհիկ տերերի հակամարտությունները իրականում պայմանավորված են եղել գլխավորապես Արշակունյաց Հայաստանի ֆեոդալական իրականության առանձնահատկություններով։ Ինչ խոսք, վիպասանն այստեղ օգտվել է պատմագիտական նորագույն հետազոտություններից, բայց մենք պարտավոր ենք ըստ արժանվույն գնահատել նրա ինքնուրույն մոտեցումը։

Հատկապես «Պապ թագավորի» մի քանի վիպական պատկերներում Զորյանը քննական ընկալումով ֆուրովի օգտագործել է ոչ միայն այդ հակամարտությունների վերաբերյալ մատենագրական աղբյուրների տվյալները, այլև ելևակայությամբ ստեղծված փաստերը, որոնք, ըստ մեծի մասին, պատմականորեն նույնքան ճշմարտապատում և տիպական են թվում։

Զորյանը հատուկ ուշադրություն է դարձրել աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների հակամարտությունների սոցիալական հիմքերի բացահայտմանը, առանձին փաստերի գեղարվեստական ընդհանրացման միջոցով նպատակ ունենալով հաստատել այն իրողությունը, որ Պապ թագավորի դեմ հոգևոր դասի թշնամության գլխավոր պատճառը եկեղեցու իրավունքների սահմանափակման հարցն է եղել, թագավորի այն հրամանը, որով եկեղեցին զրկվում էր ժողովրդից պղի ու տասանորդ գանձելու իրավունքից և հարկահանությունը հայտարարվում էր արքունի մենաշնորհ։ Ճիշտ է, դեռևս Լաֆֆին «Սամվելի» «Փակագծի մեջ» գլխում նշել էր IV դարի պայմաններում սոցիալական գործոնի դերը աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունների սեր-

9 Մանրամասն տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 4, էջ 90 և հտ.։

ման մեջ, բայց նա վեպում չանդրադարձավ համապատասխան իրողությունների գեղարվեստական արտացոլմանը՝ այն, ըստ երևույթին, իր նպատակից դուրս համարելով։

Թագավորի հրամանը եկեղեցական տուրքերի մասին կայծակի արագությամբ տարածվում է երկրով մեկ ու դժգոհության մեծ ալիք առաջացնում հոգևոր դասի բոլոր շերտերում։ Զորյանին հաջողվել է շոշափելիության չափ կենդանի ներկայացնել անաշխատ կյանքից ղրկվելու հեռանկարից սարսափահար հոգևորականության զայրույթն ու դիմադիր ոգին։ Այս տեսակետից առանձնապես կենդանի է ստացվել Վաղարշապատի մայր տաճարի բակի պատկերը «Պապ թագավորի» մեջ։

Տաճարի բակն է հավաքվել վանականների ու մենակյացների հուզված ու խուճապահար բազմությունը։ Ամեն մեկը, իհարկե, լավ հասկանում է թագավորի հրամանի իմաստը, բայց բոլորն էլ աշխատում են իրական հող չունեցող այլևայլ չափազանցված մեկնաբանություններով ծանրացնել հանդուգն թագավորի «աստվածընդդեմ հանցանքը»։ Եպիսկոպոսներից մեկը նույնիսկ չի քաշվում թագավորին բացեիբաց «տհաս» անվանել, «տհաս», վասնզի նա, արձակելով այդ հրամանը, չի մտածում, որ դեմ է գնում Տրդատ Մեծի օրենքին, որ հողեր, կալվածներ է շնորհել եկեղեցուն, տուրքեր է սահմանել նորա համար որպես գոյության աղբյուր» (342), «Պապը նոր մի Հուլիանոս է. նա ցանկանում է երևի քրիստոնեության փոխարեն հեթանոսություն... հեթանոսություն պիղծ ու զազիր...» (342) և այլն, և այլն[10]։ Պապի նոր ձեռնարկումներից դժգոհ հոգևոր դասի վերնախավի մարդիկ նույնիսկ ուղղակի դաշինքի են գնում բյուզանդական կայսրության հետ՝ ընդդեմ Արշակունի «բնիկ տիրոջ»։ Այս տեսակետից շատ հետաքրքրական են Խադ սրբազանի ու Կյուրեղ եպիսկոպոսի և կայսերապաշտոնյա Տերենտի փոխհարաբերությունների ճշմարտապատում նկարագրությունները, մասնավորապես՝ Խադի ու Կյուրեղի գիշերային գաղտնի այցելությունները Տերենտին՝ հարկերի մասին Պապի հրամանի ու նոր կաթողիկոսի ընտրության առթիվ։ Բնորոշ է, որ, ինչպես ընդգծում է վիպասանը, հայ բարձրաստիճան վեղարավորները դիմում են նույնիսկ դիվանագիտական կեղտոտ խաղերի՝ կայսեր ու մետրոպոլիտի զայրույթը Պապի դեմ բորբոքելու նպատակով, Պապի քայլերը ներկայացնելով իբրև առհասարակ քրիստոնեության ու Բյուզանդիայի դեմ ուղղված ձեռնարկումներ։

Վիպական այս դրվագների հիմքում չի ընկած մատենագրական որևէ կոնկրետ փաստ։ Գրողը դրանք հորինել է ստեղծագործական երևակայությամբ։ Այդ դրվագները պատմականորեն միանգամայն հավանական ու տիպական են թվում դարի իրադարձությունների ընդհանուր ֆոնի վրա։

Համապատասխան պատմական եղելությունների, տիպական հանգամանքների գեղարվեստական ճշմարտացի արտացոլման առումով Զորյանը ոլոշակի նվաճումների է հասել մասնավորապես «Պապ թագավորում»։ Ճշմար-

---

10 Հետազոտողներից ոմանք, լավ տեղյակ չլինելով հայ իրականության պատմական փաստերին, երբեմն անհիմն ու շփոթ մտքեր են զարգացրել։ Այսպես, օրինակ, Բ. Բրայնինան և Ս. Խիտարովան այն կարծիքն են հայտնել, թե իբր Պապը իր ռեֆորմներով «թույլատրեց դավանանքի ու սովորությունների ազատություն» (տե՛ս Б Брайнина, С. Хитарова, Стефан Зорьян, М., 1960, էջ 209)։ Երևում է, հեղինակներն այստեղ անվերապահորեն ընդունել են հայ կղերական պատմագրության խիստ կողմնակալ հայսնի դրույթները կամ Պապին շփոթում են նոր ժամանակների ազատախոհ գործիչների հետ։

տապատում է հնչում, օրինակ, Հայաստան նոր ոտք դրած երիտասարդ թագավորի տրտունջը. «... Եվ այս է զարմանալի, Երեմիա... նախարարների չափ, գուցե ավելի, զարմանալի են մեր հոգևոր հայրերը, եկեղեցու սպասավորները՝ ճանապարհին, հիշո՞ւմ ես, որ շենը գրավում էին՝ եկեղեցունն էր. հողը եկեղեցունն էր, և թե ո՞րն էր պետությանը՝ չիմացա... Իսկ վարդապետները... նկատե՞լ ես, այնպես են պահում իրենց՝ թվում է թե նոքա են տերերը երկրի... հրամայում են ոչ միայն քահանաներին, այլև շինականներին, անգամ նախարարներին... Եվ երբ մի անգամ զարմացա հույժ՝ Ներսեսն ինձ հանգստացրեց. «Այդպես ավելի դյուրանում է քո գործը, զավակս»... Եվ ով է տվել նրանց այդքան իրավունք։ Այնքան չեն զբաղվում եկեղեցով ու աղոթքով, որքան միջամտում են պետության գործերին...» (110—111)։ Պերճախոս են, մանավանդ, «Պապ թագավորի» այնպիսի դրվագներ, ինչպես, ասենք, Փավստոսի «Պատմության» հայտնի հատվածի հիման վրա կերտված այն պատկերը, որում նկարագրվում է, թե ինչպես ոտնահարելով ամեն մի սրբություն, վարդապետը հենց ճանապարհի վրա երեց է ձեռնադրում մի պատահական անցորդի՝ նրա ձեռքից երիվարը խլելու նպատակով։ Պապը Ներսեսի ձեռնարկությունների նպատակը ճիշտ է նշմարում, կարծելով, որ բոլոր միջոցներն ուղղված են «իր իշխանությունն ամրապնդելու»՝ ի հաշիվ աշխարհիկ իշխանության թուլացման (իրերի վիճակը անձամբ ուսումնասիրելուց հետո է նա զալիս այդ համոզման)։ Թագավորը նեղվում է դրանից։ Իր այս դժգոհությունը Պապ թագավորը հայտնում է նաև Ներսես կաթողիկոսին, երբ վերջինս հարկերի մասին նրա արձակած հրամանի առթիվ այցելում է Պապին։ Հենց այդ հանդիպման նկարագրության մեջ վիպասանն ըստ էության շոշափում է հայ աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների ներհակությունների հիմնական հարցերը։

Երկրի աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների ներհակությունների իրական դրդապատճառների, ինչպես և նրանց միջև առկա գերիշխանական պայքարի բուն էության մասին բավական կենդանի պատկերացում են տալիս «Պապ թագավորի» վերջում զետեղված որոշ դրվագներ, որոնց մեջ նկարագրվում է, թե ինչպես տարբեր առիթներով Պապ թագավորը եկեղեցուց խլում է աշխարհիկ կյանքը, մարդկանց սովորական փոխհարաբերությունները կարգավորող լծակները, որոնք առաջներում իր ձեռքն էր առել եկեղեցին՝ օգտվելով թագավորական իշխանության տկարությունից։ Պապ թագավորի՝ հոգևորականության գործերին խառնվելու ամենահամարձակ քայլերից մեկն էլ Ներսեսի մահից հետո նոր կաթողիկոսի ընտրության ու օծման փաստն է։ Այստեղ վիպասանը, բնական հայեցակետով մերձենալով մատենագրական տվյալների գնահատությանը, կարողացել է դրանք վարպետորեն օգտագործել Պապի հասարակաքաղաքական ընթացքի մի կարևոր կողմի արտացոլման, նրան իբրև ժամանակի պատմական առաջավոր միտումները կրող նշանավոր գործչի բնութագրելու համար։ Պատմական փաստի գեղարվեստական նոր ու ճշմարտացի իմաստավորումով Զորյանն, ըստ էության, մարմնավորել է ազգային կողմնորոշման քաղաքականության հաղթանակը պատկերվող դարաշրջանում։

Վիպասանը պատշաճ տեղ է հատկացրել նաև ներհակ կողմերի գործող անձանց որոշակի ընթացքի անձնական-հոգեբանական շարժառիթներին (օր., Խաղի կաթողիկոս դառնալու ձգտումը, հասունացած Պապի նեղվելը Ներսեսի հորդորիչ-խնամակալի դերից և այլն)։

Սակայն Զորյանի պատմական վեպերում երկրի աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների հակամարտության պատկերը մի շարք կարևոր կետերում, այնուամենայնիվ, չունի անհրաժեշտ խորություն։ Այդ հանգամանքը մի զգալի չափով կապված է երկրի հոգևոր առաջնորդի հասարակական վարքագծի և առհասարակ նրա ընդհանուր բնութագրի որոշ կարևոր հանգամանքների միակողմանի մեկնաբանության հետ։

Ներսեսի կերպարի մի քանի կողմերի գեղարվեստական ճշմարտացի բացահայտման բնագավառում Զորյանն, անշուշտ, որոշ գրական արդյունքների հասել է։ Այսպես, օրինակ, հակառակ մի կարգ պատմաբանների անհիմն պնդումների, վիպասանը այն ճիշտ թեզն է պաշտպանում, որ IV դարի երկրորդ կեսին հայ եկեղեցին ու հոգևոր բարձրագույն իշխանությունը, հանձին Ներսես կաթողիկոսի, իրենց գործունեությամբ հանդես չեն եկել Արշակունի թագավորների (Արշակ և Պապ) պետական կենտրոնաձիգ քաղաքականության սատարողի դերով։

Այս առումով հետաքրքրական է, օրինակ, «Հայոց բերդի» մի հատվածը։ Ըստ գրողի մեկնաբանության, Արշակավանի պատմության առիթով թագավորի ու նախարարների լարված փոխհարաբերությունների պահերին թեև երկրի հոգևոր առաջնորդը հավանություն չի տալիս նախարարների՝ իրենց «բնիկ տիրոջ» դեմ ապստամբելու մտքին, բայց մյուս կողմից էլ, երբ փաստ է դառնում նախարարների ապստամբությունը, և բորբոքվում է կռիվը երկու կողմերի միջև, Ներսեսը ստիպված ընդառաջ է գնում թագուհու խնդրանքին և հանձն առնում միջնորդի դերը՝ նախ և առաջ մտահոգվելով նախարարներին փրկելու հոգսով։

Ներսեսը ոչ միայն չի պաշտպանում Արշակավանի՝ թագավորական իշխանության այդ ամուր հենարանի կառուցումը, այլև վնասակար գործ է համարում այն։ Նրա կարծիքով, դա «մի ձեռնարկ է, որ կարող է վնասել ոչ միայն նախարարներին, այլև եկեղեցուն, մանավանդ եկեղեցուն. զրկվելով շինականներից՝ կպակասեն եկեղեցու հասույթները, և նա կզրկվի հեղինակությունից... կարող է լինել ավելին. Արշակը զորանալով՝ կսկսի հոխորտալ...» (279)։ Ահա թե ինչու «Այժմ Ներսեսը գոհ էր, որ նախարարները դժգոհ են Արշակից» (281)։

Վիպասանը ճշմարտացի դիտարկումներ ունի նաև Ներսեսի բյուզանդական կողմնորոշման մասին։ Նա, իհարկե, կողմ չէ Հայաստանի ինքնուրույնության ոչնչացման, բայց խորապես համոզված է, որ հայոց աշխարհի գոյության միակ երաշխիքը բյուզանդական քրիստոնյա կայսրության բարեկամությունն է, անհրաժեշտության դեպքում՝ նույնիսկ նրա գերիշխանությունը։

Կարևոր է նշել նաև այն, որ օգտվելով պատմական գիտության նվաճումներից, Զորյանը գեղարվեստական համոզիչ պատճառաբանությամբ հերքում է հայ կղերական պատմագրության հայտնի վարկածը Պապի ձեռքով Ներսեսի թունավորման մասին՝ այն վերագրելով Պապից դժգոհ կղերի բամբասանքներին։

Անվիճելի է, սակայն, որ Ներսեսի կերպարի բնութագրության մեջ, մասնավորապես հայոց հայրապետի հասարակական վարքի արտացոլման մի շարք կարևոր հարցերում, Զորյանը, ըստ էության, որդեգրել է ավանդական պատմագրության հայեցակետը։

Ոչ «Հայոց բերդում» և ոչ էլ «Պապ թագավորի» մեջ Ներսեսը հանդես չի գալիս իբրև ուժեղ ու հզոր անհատականություն, որպիսին նա եղել է իրակա-

նում։ «Հայոց բերդի» մեջ Ներսեսն ընթերցողին ներկայանում է գերազանցապես թագավորի ու նախարարների միջև միջնորդի ու հաշտարար դատավորի (երբեմն՝ ակամա) դերով, իսկ «Պապ թագավորի» մեջ նրան տեսնում ենք մեկ՝ երիտասարդ թագավորի դեմ հոգևոր դասի գայրույթը ղեկավարի, մեկ՝ նրան խրախուսողի, «ուղիղ ճանապարհի» բերող «ծերունի մարգարեի» դերում։ Ներսեսն արհեստականորեն կտրվել է իր բուռն քաղաքական գործունեության ոլորտներից, որով և սահմանափակվել են կերպարի ամբողջական բնութագրության հնարավորությունները։ Ներսեսը մի տեսակ ներքին վախով է համակվում Արշակի հետ խոսելիս և, ինչպես հարկն է, իրեն չի էլ կարողանում պահել նրա ներկայությամբ. մերթ՝ «շփոթվում» է իրերի մասին Արշակի քաջատեղյակությունից, մերթ՝ «անակնկալի» գալիս նրա անսպասելի հարցերից, մերթ՝ «հարմար վայրկյանի սպասում իր առաքելության մասին խոսելու», մերթ էլ՝ զարմանալի մեղմությամբ պատասխանում թագավորի կծու հեգնանքին, անգամ վիրավորանքին, և սոսկ՝ «մտածում տհաճությամբ»։ Թե՝ «վերստին վիրավորանք... երբեք չունի հարգանք դեպի հայրը հոգևոր» (286—89)։

Նույն մոտեցումով ու մտայնությամբ են գրված նաև «Պապ թագավորի» մի շարք հատվածները։

Լուրջ տարակուսանքներ են հարուցում Ներսեսին վերաբերող որոշ հանգամանքներին հեղինակի տված մեկնաբանությունները։ Հնարավո՞ր է կարծել, օրինակ, թե խորաթափանց ու հեռատես Ներսեսը իրականում ժամանակին չի կռահել Արշակավանի կառուցման բուն նպատակը, և այն վերագրել է լոկ Արշակունի թագավորի փառասիրությանը։

Պարզ է, որ նման մեկնաբանությունները, որոնք չեն բխում փաստերի բուն էությունից, ի վիճակի չեն բացահայտելու ճշմարտությունը պատմական մեծ իրողությունների մասին։

* * *

Անցյալի գեղարվեստական պատկերման մեջ նշանակալից նվաճումների հասած դասական պատմավիպագրությունը շոշափելի արդյունքներ ձեռք չբերեց պատմության մեջ ժողովրդի ունեցած դերի, դասակարգային ներհակությունների, ժողովրդի կյանքի ու կենցաղի գեղարվեստական արտացոլման բնագավառում։ Բաֆֆին, հայ դասական պատմավիպագրության խոշորագույն դեմքը, իր ժամանակ ուշագրավ դիտողություններ է արել պատմական վեպում ժողովրդի առօրյա կյանքի ու կենցաղի, նրա այրելակերպի, նիստուկացի, սովորությունների, տերերի հետ նրա փոխհարաբերությունների ու հարակից խնդիրների արտացոլման անհրաժեշտության վերաբերյալ, որոնք իրենց հետաքրքրությունը չեն կորցրել նաև մեր օրերում։

«Մեր պատմության մեջ գրեթե բոլորովին մոռացված է ամբոխը,— գրում է նա։— Մեր պատմագիրները չեն նկատել, որ բացի թագավորներից և իշխաններից, բացի հոգևորականներից և զինվորներից, Հայաստանում կար և ժողովուրդ, որ ապրում էր, որ յուր կյանքն ուներ, որ յուր տոները, հանդեսները և ցնծություններն ուներ, և որի հոգեկան և բարոյական հակումներն արտահայտվում էին այս և այն հասարակական երևույթների մեջ։— Մեր պատմության մեջ ժողովուրդ չկա, կան միայն տիրապետողներ։ Մենք չգիտենք, ինչպես էր ապրում հայոց շինականը, ինչ տեսակ հարաբերությունների մեջ էր յուր տերերի հետ, կամ ինչ էր ուտում և ինչ էր հագնում և ինչ տեսակ զվարճություններ

ուներ։ Մենք չգիտենք, թե ինչ էր շինում հայոց արհեստավորը, որ երկրների հետ առևտուր ուներ հայոց վաճառականը, կամ ինչ տեսակ անասուններ էր սնուցանում հայոց խաշնարածը։ Մեր պատմությունը լուռ է այդ բոլորի մասին։ Բայց վեպի համար դրանք կարևոր են... Եվ այդպես, մեր պատմությունը, իբր չոր ու ցամաք տարեգրություն, խիստ նվազ նյութ է տալիս մի վիպասանի, որով կարող լիներ նա նկարել անցյալի ճիշտ պատկերը յուր բոլոր երևույթներով»[11]։ Բայց, չնայած դրան, ժողովուրդն իր առօրյա կյանքով ու կենցաղով, իր հոգսերով ու տառապանքով տեղ չգտավ նաև Ռաֆֆու պատմավեպերում, այդ թվում և «Սամվելի» մեջ, որի առաջաբանից էլ հենց վերցված է վերը բերված քաղվածքը։

Ինչպես պատմական իրականության այլ կողմերի, այնպես էլ ժողովրդի իրական կերպարի գեղարվեստական արտացոլումը տեսնում ենք արդեն սովետահայ պատմավեպի հիմնադիրների՝ Դերենիկ Դեմիրճյանի ու Ստեփան Զորյանի ստեղծագործություններում։

Ստեփան Զորյանի եռապատումի առաջին երկու վեպերում («Պապ թագավոր» և «Հայոց բերդը») այս տեսակետից առանձնապես ուշագրավ են մի քանի ռազմի դրվագներ ու մասսայական տեսարաններ։ Այսպիսիք են, օրինակ՝ Զիրավի ու Նախջվանի ճակատամարտերը, հաղթանակի խրախճանքը Դվինում («Պապ թագավոր»), Արշակավանի պաշտպանությունը, Շահապիվանի նավասարդի տոնախմբությունը («Հայոց բերդը»), ուր վիպասանին հաջողվել է տիպական հանգամանքների մեջ պատկերել ժողովրդի հայրենասիրական կռվի թափը, նրա ազատատենչ ոգու փայլուն դրսևորումները, առօրյա խնդությունները, ծեսերն ու սովորությունները։ Վերջիններիս ճշմարտացի ու գունեղ պատկերները կենդանություն են հաղորդում վիպական հյուսվածքին։

Զորյանի պատմավիպագրական արվեստի էական նվաճումը պիտի համարել, անշուշտ, դարաշրջանի բնորոշ սոցիալական ներհակությունների գեղարվեստական արտացոլումը, որով մի նոր կողմից են բացահայտվում հեռավոր դարերի պատմական իրականության յուրահատկությունները, առավել խոր ու ամբողջական է դառնում դարաշրջանի հասարակական կյանքի պատկերը։

Նկատի պետք է ունենալ, որ այդ երևույթների գեղարվեստական արտացոլման համար վիպասանն իր ձեռքի տակ ունեցել է միայն կցկտուր տվյալներ։ Նա շատ իրողություններ պիտի տեսներ պատմիչների վկայությունների տողերի արանքում, շատ բան պիտի կռահեր պատմության տրամաբանության հիման վրա, երևակայության ուժով պիտի ստեղծեր համապատասխան վիպական հանգամանքներ, որոնք հնչեին նույնքան բնական ու տիպական, ինչպես բուն պատմական, հավաստի իրողությունները։

Վերհիշենք, թե, օրինակ, Արշակավանի առթիվ ինչ են հաղորդում պատմական հիշատակարանները։ Փավստոսը Արշակավանի շինության առթիվ գրում է.

«...(Արշակը) ետ հրաման ընդ ամենայն գաւառս իշխանութեան իւրոյ, և հրամայեաց կարգել քարոզ ընդ ամենայն տեղիս աշխարհացն հրապարակին իւրոյ. և ամենայն կողմանս գաւառաց իւրոց լի առնէր հրամանաւն արքունի։ զի եթէ ոք ումեք ինչ պարտիցի, եթէ ոք ուրուք ուստեք ինչ վնասեալ իցէ, կամ ոք ումեք ինչ դատ պարտիցի, ամենեքեան եկեսցեն ի դաստակերտն շինեսցին։

11 Ռ ա ֆ ֆ ի, Երկերի ժողովածու, հատ. 7, էջ 5—6։

եթէ արիւնահան ոք իցէ, կամ վնաս ուրուք ումեք արարեալ իցէ, կամ զկին ուրուք տարեալ իցէ, կամ պարտապան իցէ, կամ ոք զուրուք կարասի ունիցի, կամ ոք յումեքէ երկիւղած ինչ իցէ, և եկեսցէ յայն տեղի, դատ և իրաւունք մի լիցին։ Իսկ եթէ ոք ումեք ինչ պարտիցի և որում պարտիցին, եկեալ յայն տեղին՝ առանց դատի և իրաւանց կալցին, և ի դուրս տարցեն։

Իրրև ել Հրաման յարքայէն, ժողովեցան այնուհետև յայն տեղի ամենայն գողք և աւազակք, արիւնահանք, սպանողք, սուտք և մարդելոյզք, վնասակարք, գանձահատք, զրկողք, ստաղատք, գրախօսք, գերփողք, յափշտակողք, ժլատք։ Բազում վնաս առնէին, և անդր անկանէին. բազում կանայք զարս՝թողուին, և անդր անկանէին. բազում արք զիւրեանց կանայս թողուին, և զայլոց կանայս առեալ անդր անկանէին. բազում ծառայք զիւրեանց տերանց զգանձս ըմբրոնեալ, փախուցեալք անդր անկանէին. բազում աւանդաւորք զաւանդս լի զպատ՝ճեստս բարձեալ, անդ անկանէին. գերփէին աւերէին զերկիրն ամենայն։ Զի թէպէտ և կարի յոյժ բազմացաւ աղաղակն, դատ չկայր, և իրաւունք ումեք յարտաքունուստ ոչ ելանէին։ Վասն այսորիկ ամենայն մարդ հառաչելով վայէին և ասէին ի հաւանել բանիցն իւրեանց. այս բանք ըստ այս օրինակի պաշտէին, առ հասարակ ամենեցուն ասելով՝ թե իրաւունք մեռան, և վասն այսորիկ ոչ դատանէին. այլ թէ էր, և կորուսեալ էին, ուր և էր ջանայաք խնդրէաք դտանէաք»[12]։

Բյուզանդի այս կարևոր տեղեկությունը յուրովի հաստատում է Մովսես Խորենացին՝ գրելով. «...Եւ Հրաման (Արշակը), որ ոք անկեալ անդր «Արշակավան) բնակեցէ՝ մի լիցի ի վերայ նորա իրաւունք դատաստանի։ Եւ նոյն ժամայն ծովացեալ լցաւ մարդկութեամբ հովիտն ամենայն. քանզի աւանդաւորք և պարտականք, և ծառայք և վնասակարք, և գողք և սպանողք, և կնահանք և այլք այսպիսիք փախուցեալք անդր անկանէին և ոչ կայր նոցա այց և խընդիր»[13]։

Փավստոսի ու Խորենացու վերոհիշյալ ակնարկներից կարելի է մակարերել, որ եղել են դեպքեր, երբ շինականներն ու ռամիկները դուրս են եկել իրենց տերերի հպատակությունից, գործել են անկախ ու ինքնագլուխ, հանդգնել են հակաճառել տերերին, հարկ եղած դեպքում՝ զենքը ձեռքին վրեժ լուծել նրանցից կեղեքումի ու շահագործման համար։

Հետազոտողների կարծիքով, որոշակի սոցիալական բովանդակություն են ունեցել նաև այն դարերում Հայաստանում բավականին լայն տարածում ստացած աղանդավորական շարժումները (մծղնեականներ, բորբորիտներ և այլն), որոնց մասին, տարաբախտաբար, քիչ տվյալներ են հասել մեզ։

Ահա այն ամենը, ինչ իր ձեռքի տակ ունեցել է Զորյանը։ Գրողի վարպետությունն էլ հենց այն է, որ այս կցկտուր պատմական տվյալների հիման վրա կարողացել է գեղարվեստական շոշափելի ընդհանրացումների հասնել իրականության սոցիալ-դասակարգային ներհակությունների ճշմարտացի արտացոլման բնագավառում։

Առաջնորդվելով պատմականության սկզբունքով, վիպասանը «Պապ թագավորի» մեջ այդ ներհակություններին անդրադառնում է երկրի աշխարհիկ ու հոգևոր տերերի բարդ փոխհարաբերությունների առնչությամբ, մինչդեռ «Հայոց բերդում» շեշտը գերադանցապես դրվում է տարբեր դասակարգերի սոցիա-

---

12 Փավստոս, էջ 165—166 (ընդգծումը իմն է.—Վ. Ն.)։
13 Խորենացի, էջ 288։

լական հակամարտությունների ու կենտրոնացած պետականության համար մղված պայքարի բնական հանգույցների ու իրական կապերի վրա։

«Պապ թագավորի» առաջին հրատարակության մեջ (1944 թ.), նկատելի չափով տուրք տալով Պապին «դեմոկրատացնելու», նրան «ժողովրդական թագավոր» ներկայացնելու մտայնությանը, հեղինակը որոշ ծայրահեղությունների մեջ ընկավ և ճշմարտացի ու պատմականորեն համոզիչ մեկնաբանություն չրտվեց դարաշրջանի սոցիալական հակամարտությունների էական հանգամանքներին։ Անհրաժեշտ խորությամբ չթափանցելով երևույթների էության մեջ, վիպասանը Պապի հրամանը եկեղեցական տուրքերի մասին ջանում էր մեկնաբանել թագավորի «ժողովրդասիրության» հայեցակետով՝ հաշվի չառնելով այդ քայլի պատմական բուն դրդապատճառները։ Սա չէր կարող չխանգարել վիպասանին պատմական ճշմարտությունն իր ողջ բարդության մեջ ռեալիստական արվեստի ուժով վերականգնելուն։ Վեպի երկրորդ և հաջորդ հրատարակությունների ժամանակ Զորյանը մի շարք կարևոր կետերում ուղղեց թույլ տրված սխալը, պատմական երևույթները ներկայացնելով հիմնականում հաջողված ու համոզիչ գեղարվեստական պատճառաբանությամբ։

«Պապ թագավորի» մեջ ընդգծելով այն իրողությունը, որ իր հարկային ռեֆորմով Պապը ձգտում էր հոգևոր դասի տնտեսական հզորության թուլացման հաշվին հարստացնել արքունի գանձարանը, որ նրան այնքան պետք էր պետական մեծ նպատակների, հատկապես՝ ազատագրական պայքարը հաջողությամբ գլուխ բերելու համար, վիպասանը միաժամանակ իրավացիորեն շեշտում էր Պապի և հոգևոր իշխանության հակամարտությունների գերիշխանական միտումները։ Թագավորը հոգևոր դասի տնտեսական տկարացման մեջ տեսնում էր հասարակական կյանքում նրա դերի ու ազդեցության թուլացման երաշխիքը, որը և համարում էր գահի միահեծանության ամրապնդման վստահելի ուղիներից մեկը։

Ռեալիստ արվեստագետը մի քանի գծերով ավելի ևս ամրապնդում է պատմական իրողությունների ճշմարտացի մեկնաբանությունը։ Ասես ինքն իր հետ բանավիճելով, Զորյանն, օրինակ, հատուկ շեշտում է եկեղեցական տուրքերը վերացնող թագավորի ու շինականության սոցիալական շահերի անհամապատասխանությունը, արտահայտիչ պատկերներով ընդգծելով նրանց միջև գոյություն ունեցող վիհի անկամրջելիությունը։

Ժողովրդի մեջ ծպտյալ շրջող Պապը «մի տեղ օրինակ՝ վանքապատկան շինականներից դժգոհություն լսելով վանքի դեմ, հարցրեց՝ թե ինչու չեն դիմում նոր թագավորին, որ իրենց օգնի։

— Է՜, տեր սեպուհ,— պատասխանեց ծեր մի շինական,— թագավորն ի՞նչ կարող է անել. նա դեռ տղա է անփորձ։

— Սակայն դեռ չդիմած՝ ինչպես իմացար չի կարող,— շարունակեց Պապն ավելի հետաքրքրված։

— Միևնույն է, տեր սեպուհ,— գլուխն օրորեց նույն ծերունին,— ոչ մի թագավոր մեզ դեռ չի օգնած։ Սա նմանապես...» (281)։

Երբ մեզ հետաքրքրող տեսակետից համեմատում ենք Ստ. Զորյանի եռագրության առաջին երկու վեպերը, ապա միանգամայն որոշակի նկատելի է դառնում վիպասանի ստեղծագործական էվոլյուցիան, պատմական երևույթների ընկալման ու մեկնաբանության սկզբունքների հետագա խորացումն ու կատարելագործումը։ Եթե «Պապ թագավորի» մեջ ժողովուրդը հանդես է բեր-

վում գերազանցապես իբրև ճակատող զորք, զանազան մասսայական տեսարանների ակտիվ կամ պասսիվ մասնակից ամբոխ և կամ թե եկեղեցական հարկահանություններից կեղեքվող մասսա, ապա «Հայոց բերդում», ավելի ևս լայնացնելով ժողովրդի հավաքական կերպարի ցուցադրման շրջանակները, վիպասանը շեշտն իրավացիորեն դնում է նրա պատմական բնութագրության այլ տիպական կողմերի վրա, ընդգծելով հատկապես սոցիալական ակտիվ բողոքի ուժը, տարերային ընդվզումներն իրենց տերերի դեմ, ժողովրդին ներկայացնելով իբրև իր ուժն ու ինքնությունը գիտակցող, իր սոցիալական շահերը գինու զորությամբ պաշտպանելու պատրաստ մի պատկառելի ուժ։

Այդ նպատակով նա օգտագործել է Արշակավանի շինության ու կործանման պատմությունը, որի մեջ իրականում խաչավորվել են ժամանակաշրջանի գրեթե բոլոր էական հակասությունները։ Արշակ Բ-ն, մեծ հետևողականությամբ հետամուտ լինելով գլուխ բերելու կենտրոնացված պետության դժվարին գործը, գահի միահեծանությունն ամրապնդելու համար ձգտում էր օգտագործել բոլոր հնարավոր միջոցները՝ երբեմն նույնիսկ չխուսափելով ծայրահեղ քայլերից ու մեծ համարձակության դիմելուց։ Արշակը, մասնավորապես, շատ կարևոր էր համարում գահի իշխանության հզորացումը՝ հատկապես ի հաշիվ նախարարների ֆեոդալական ուժի թուլացման, մի հանգամանք, որ այնքան բացահայտ արտահայտվեց Արշակ թագավորի հայտնի հրովարտակի կապակցությամբ, որով նա նախարարական շեներից դեպի նորակառույց ավանն էր գայթակղում գլխավոր աշխատուժը՝ շինականներին։ Պատմա-գեղարվեստական առումով ճիշտ է վարվել վիպասանը, որ հիմնականում հենց այս հրամանի շուրջ էլ հյուսել է վիպական կոնֆլիկտը։

Դարաշրջանի սոցիալական հակամարտությունների հանգամանքների նկարագրության մեջ վիպասանը հավատարիմ է մնացել պատմականության սկզբունքին։ Նա արտահայտիչ պատկերներով ցույց է տվել, որ իրենց նախարար տերերից փախած ու Արշակավան հավաքված ժողովուրդը չի փրկվում կյանքի դառնություններից, այստեղ էլ իրականություն չեն դառնում նրա երազանքները, բարեկեցիկ կյանքի նրա տենչերը։ Եվ իսկապես, ծանր պայմաններում մարդիկ կառուցում են քաղաքը՝ շարունակ սպասելով, թե երբ շահագրգիռ Վարազ Բնունին կկատարի իր խոստումն ու իրենց կբաժանի «արքայական պարգևը»։ Սակայն, այնուամենայնիվ, քաղաքում հավաքված ժողովուրդը, վայելելով արքայի հրովարտակով խոստացված որոշ արտոնությունները, մի տեսակ, ասես ձեռք է բերել «հարաբերական ազատություն», և այդ էլ շատ թանկ է նրա համար ու նա մտադիր չէ հեշտությամբ զիջել ոչ ոքի։ Քաղաքն արդեն տասը հազարի չափ բնակիչ ունի, պատմում է հեղինակը, և «մյուս կողմից, չնայած տերերի արգելքներին, շարունակում էին գալ. և գալիս էին գրեթե ամեն օր» (333)։ Արշակավանի կառուցման աշխատանքից ու կյանքի ծանր պայմաններից ավելի ժողովրդին սարսափեցնում է վերստին նախարարների ձեռքն ընկնելու մռայլ հեռանկարը։

Քաղաքի բնակչությունը տեղեկանալով, որ նախարարները պահանջում են նրա վերադարձնել «իրենց ծառաներին», սպառնում, որ եթե նրանք «չգան իրենց կամքով, կտանեն ուժով», ալեկոծվում է ու լցվում կռվելու վճռականությամբ, որ այնպես լավ ցույց է տրվում վիպում։ Ճակատամարտից առաջ, երբ «տիրափախ» շինականների մեջ կասկած է առաջանում, թե Վարազ իշխանը կարող է երկնչել հարձակվող զորքի բազմությունից ու իրենց հանձնել

տերերին, տագնապահար ու ցասումով լի դեպի նրա տունն են շտապում։ Այստեղ հեղինակը գեղարվեստորեն համոզում է, որ ժողովրդի ինքնապաշտպանության վճռականությունն այնքան է մեծ, որ ազդում է նույնիսկ քաղաքի շփոթված տերերի վրա, նրանց ևս ուժ ու կորով ներշնչում։ Գնունի իշխանը, տեսնելով ժողովրդի ցասումն ու պաշտպանվելու անհաղթահարելի կամքը՝ անմիջապես հրամայում է քաղաքացիներին զենքեր բաժանել, հաստատ հավատացած, որ «նոքա կկռվեն կատաղի, վասնզի այստեղ ապաստանել են ոչ նրա համար, որ դյուրությամբ անձնատուր լինեն իրենց նախկին տերերին։ Ոչ, նոքա անձնատուր չեն լինի։ Երբեք...» (343)։ Խորապես ճշմարտացի, իրական ու հուզիչ են վեպի այն էջերը, ուր Զորյանը նկարագրում է ժողովրդի խիզախ ու անձնուրաց կռիվը նախարարական զորքի գերակշիռ ուժերի դեմ։

Վիպասանը հոգեբանական նուրբ դիտումով նկատում է, որ ժողովրդի միասնությունը միանգամից ու անմիջապես չի ստեղծվում, որ նրա տարբեր խմբերի՝ արքունի ոստանից եկածների ու «տիրափախների» միջև կան տարաձայնություններ, կան և տատանվողներ։

Արշակավանի պաշտպանության կռվի նկարագրությունը իր կենդանի ու արտահայտիչ պատկերներով, էպիկական մեծ շնչով վեպի լավագույն հատվածներից է, հեղինակի վիպելու արվեստի աչքի ընկնող նվաճումներից։ Այդ նկարագրությունների մեջ ընթերցողի առջև անցյալը հառնում է իբրև կենդանի իրականություն՝ իր տիպական հանգամանքներով, մարդկային անհատականությունների դրսևորման բնորոշ գծերով։ Ճշմարտապատում ու խոսուն են նաև վեպի այն հատվածները, որոնց մեջ պատմվում է, թե ինչպես Կոգովիտի գյուղերի շինականները աշխատում են բանակների ավերումից փրկել հասուն, հնձելու սպասող արտերը։

Իրական գծերով է ներկայացված նաև Թիր ու Արանց գյուղերի շինականների խնդրանքը, որոնք սենեկապետի միջոցով նախ դիմում են թագավորին, խնդրում, որ նա այլ տեղ տեղափոխի կռիվը, քանզի տրորվում, փչանում են իրենց արտերը. թագավորը մերժում է։ Շինականները դիմում են Ներսեսին, հույս ունենալով, որ հայրապետը կկարողանա ազդել թագավորի վրա։

Հապա ինչպիսի հույզով է ներկայացնում վիպասանը զինվոր-շինականների համար ատելի պատերազմի ավարտումն ու վրա հասնող խաղաղությունը «Զինվորի համար,—գրում է հեղինակը,—աշխարհում չկա երևի ավելի հաճելի և ավելի երջանիկ պահ, քան զինադադարի շեփորը. ինչպիսի հույզեր և երազներ են զարթնում նրանց հոգում...»։

Թվում է, հենց այս ուղղությամբ էլ պիտի ընթանա սովետահայ պատմավեպի հետագա զարգացումը, որի կայուն երաշխիքները տվել են այդ պատմավեպի դասական հիմնադիրները՝ Դերենիկ Դեմիրճյանն ու Ստեփան Զորյանը։

АРМЕНИЯ IV ВЕКА И ИСТОРИЧЕСКИЕ РОМАНЫ СТ. ЗОРЬЯНА

В. С. НАЛБАНДЯН

(Резюме)

В статье кратко охарактеризованы наиболее существенные стороны армянской действительности IV в. и особенности ее художественного отражения в исторической трилогии Стефана Зорьяна («Армянская крепость», «Царь Пап» и «Вараздат»). В частности, исследуется деятельность двух выдающихся представителей армянской государственности— царей династии Аршакидов Аршака II и его сына Папа, получившая в традиционной историографии одностороннее и тенденциозное освещение. Несмотря на некоторые противоречия деятельности этих исторических личностей, они тем не менее выступали как носители исторически прогрессивных тенденций. Их деятельность главным образом определялась борьбой за политическую самостоятельность Армении, за укрепление централизованной государственной власти.

В статье рассматриваются художественные достоинства романов Зорьяна, явившиеся результатом нового историко-критического прочтения известных фактов.